ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես ջրլող թռչունների բնադրավայրերի, պահպանության մասին «Ռամսարի համաձայնագրին» Հայաստանը միացել է 1993թ.: Այն միջկառավարական փաստաթուղթ է, որն իրավական հիմք է ստեղծում խոնավ տարածքների թռչունների բնադրավայրերի պահպանման միջազգային համագործակցության համար: Համաձայնագրում նշված է խոնավ տարածքների տնտեսական, գիտական և ռեկրեացիոն նշանակությունը, իսկ ջրլող թռչունները ճանաչված են որպես միջազգային նշանակության պաշար:

Խոնավ տարածքներ են ճանաչվում բնական կամ արհեստական, ժամանակավոր կամ մշտական ճահիճները, տորֆավայրերը կամ ջրատարածքները: Անդամակցած երկրների պարտավորություններից է միջազգային կարևորության խոնավ տարածքների ցանցում համապատասխան տարածքների ընդգրկումը, որոնք պետք է կարևորվեն նաև դրանց էկոլոգիական, լճաբանական, կենսաբանական և ռեկրեացիոն նշանակությամբ:

Կողմերը պարտավորվել են նաև տեղեկություններ տրամադրել այդ տարածքների էկոլոգիական վիճակի և դրա փոփոխությունների վերաբերյալ՝ նշելով պատճառները: Համաձայնագրում հատուկ նշվում է, որ խոնավ տարածքների և այնտեղ բնադրող ջրլող թռչունների պահպանության նպատակով անհրաժեշտ է ստեղծել բնության հատուկ պահպանվող տարածքներ: 2005թ. Ռամսարի համաձայնագրին միացած երկրների թիվը 146 էր, իսկ խոնավ տարածքների ընդհանուր մակերեսը՝ 125 միլիոն հա:

Որպես այդպիսի տարածքներ՝ Հայաստանի Հանրապետությունում ընտրել են «Սևանա լիճ» ազգային պարկը, «Խոր Վիրապ» պետական արգելավայրը և «Արփի լիճ» ազգային պարկի ճահճոտ տարածքները: